ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/29» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 22 մարտի 2022թ.

Ժամը 12:30

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Մկրտիչ Խաչատրյան

Անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան, Գարեգին Պողոսյան

Քարտուղար՝ Նելլի Աբովյան

1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/29» ծածկագրով գնման ընթացակարգի դիմում-հայտարարության շտկման մասին

1.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/29» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի NN 1-3 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած «ԽԱՉՄԻՔ» ՍՊԸ-ի հայտում առկա անհամապատասխանությունների շտկման նպատակով՝ 18.03.2022թ.-ին կայացած հայտերի բացման նիստով հանձնաժողովը որոշում էր կայացրել. հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 N 526-Ն որոշման 41-րդ կետը, 1 աշխատանքային օրով կասեցնել գնման ընթացակարգը և «ԽԱՉՄԻՔ» ՍՊԸ-ին տալ շտկման հնարավորություն՝ NN 1-3 չափաբաժինների մասով:

2. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/29» ծածկագրով գնման ընթացակարգի դիմում-հայտարարության շտկման գնահատման մասին.

2.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/29» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի դիմում-հայտարարությունների շտկման համար նախատեսված ժամանակահատվածի ավարտից հետո, գնահատող հանձնաժողովը, գնահատեց «ԽԱՉՄԻՔ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, որի արդյունքում պարզվեց հետևյալը.

ա/ «ԽԱՉՄԻՔ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության մեջ բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը և իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը,

բ/ «ԽԱՉՄԻՔ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում ֆիրմային անվանման, ապրանքային նշանի, մակնիշի և տեխնիկական բնութագրի սյունակներում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես նշված սյունակներում պահանջվող տեղեկության փոխարեն տեղադրված են կամայական թվեր:

Վստահ կարող ենք արձանագրել, որ «ԽԱՉՄԻՔ» ՍՊԸ-ի կողմից, դիմում-հայտարարության շտկման համար նախատեսված ժամանակահատվածի ընթացքում, ոչ մի շտկում չի իրականացվել:

2.2 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/29» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց՝

ա/ «ԽԱՉՄԻՔ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և հայտը մերժել, քանի որ վերջինս չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին,

բ/ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/29» ծածկագրով գնման ընթացակարգի NN 1-3 չափաբաժինների մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած,

գ/ Սահմանված կարգի համաձայն, ներկայացնել «ԽԱՉՄԻՔ» ՍՊԸ-ի վերաբերյալ փաստաթղթերը ՀՀ Ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Մ. Խաչատրյան**

Քարտուղար _____ **Ն. Աբովյան**

Անդամներ՝ _____ **Հ. Հովհաննիսյան**

_____ **Գ. Պողոսյան**